սակ առանգմանից առաջացած հետևանքներն ու փոխադարձ յարաբերութիւնների վերջաբանը Բորչալուի գաւառում նոյն բնաւորութիւնն է ստանում, ինչ որ տեսանք նախորդ օրինակի մէջ՝ Վարանդայի վերաբերմամբ [1]։

Աղջիկ փախցնելը շատ տարածուած է Ալէքսանդրապոլի գաւառի գիւղացիների մէջ և առհասարակ առաջանում է հետևեալ պայմաններից։ Ինչպէս յայտնի է, գիւղերում թէ աղջկայ և թէ տղայի ընտրութիւնը վերապահուած է ծնողներին. աղջիկը իրաւունք չունի իւր համար փեսացու ընտրելու, դա մեծերի գործն է. տղան էլ շատ քիչ բացառութեամբ, համարեա թէ նոյն դրութեան մէջ է։ Պատահում է, որ աղջիկը «աչք է քցած» (սիրահարուած է) լինում մի երիտասարդի վրայ, և բնական է, որ ծնողների ընտրած ուրիշ փեսացուն նրան զզուելի պէտք է երևայ. բայց նա իրաւունք չունի բողոքելու դրա դէմ ծնողներին, նրա անունը կրխայտառակուի, նրան ուրիշ աչքով կընայեն, և աղջիկը ստիպուած է լինում ժամանակաւորապէս խեղդել իւր մէջ իրան տանջող այդ զգացմունքը։ Եւ ահա մի գեղեցիկ օր վեր է կենում իւր սիրած տղայի հետ ու փախչում հօր տանից. այդ դէպքում շատ քչերին է աջողւում պսակուիլ փախած տղայի հետ և ապրել որպէս ամուսիններ։ Պատահում են բացառիկ դէպքեր էլ. երբ մէկ երիտասարդ սիրահարուած է լինում մի աղջկայ վրայ, առանց վերջինից փոխադարձը ստանալու, և երբ դիմում է աղջկայ ծնողներին և մերժում ստանում, այն ժամանակ վճռում է «զոռով» փախցնել. իսկ այդպիսի դէպքերը շատ տխրալի վախճան են ունենում և շատ անգամ սպանութիւնների տեղիք տալիս [2]։

Նոյնանման առանգման օրինակներ գտնում ենք Երևանի՝ Ապարանի գիւղօրայքում [3]։ Նմանապէս վերոյիշեալ ձևերով առանգումը սովէպ կատարւում է Տաճկա-

[1] Ibid. էր. 215—216.

[2] Մշակ, 1904 թ. № 64.

[3] «Մշակ» 1903 թ. № 217.

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան